

հետ, որի մասին հետազայում դարձյալ կխոսենք նրա գործածած տառերի կապակցությամբ: Մենք կխոսենք նաև մի ուրիշ հայ քահանա և գրատպագրիչ Քոմաս Վանանդեցու մասին, որը նոտար Հ. դե Վիլդեի 1705 հոկտեմբերի 30 թվակիր արձանագրության մեջ (Ամստերդամում) անվանվում է «Ամենահարգելի պարոն Քոմաս Վարդապետ, սուրբ խաչի արքեպիսկոպոս...»: Այս Քոմաս վարդապետը (Վանանդեցին) իր ազգական (հորեղբորորդի) Ղուկասի հետ կառավարում էր, համենայն դեպս 1695 թվից, Ամստերդամի հայկական տպարանը: Ինչպես կերևա սույն հոդվածի շարունակությունից, վանանդեցիների կողմից գործածվող տառերը հատուկ համարով ունեին. դա կարող է հիմք ծառայել ապացույցելու համար, որ այս տպագրիչները գործածելիս են եղել Նիկոլասս Կիսի գեղեցիկ տառերը... Պրոֆ. Մակլերի հրատարակությունը խոսում է այդ անունը կրող միայն երկու տպագրիչի մասին, այն է Մատթեոս կամ Քոմաս և Ղուկաս: Նոտար դե Վիլդեն էլ 1705-ի իր արձանագրության մեջ խոսում է միայն Քոմասի մասին, որը, «տասը տարուց իվեր, այսինքն 1695-ից սկսած, ապրում է այս քաղաքում... և... որը, հանուն իր ազգի, հիմնեց (պատրաստել տվեց) մի տպագրական մեքենա իր մի շարք պարագաներով (գործիքներով) դրա համար...», մինչդեռ Մատթեոսը 1685-ից արդեն աշխատում էր Ամստերդամում...»:

* * *

Քիշ վերև Ամադուտիուսի կողմից անվանված եպիսկոպոս Հովհաննես վարդապետը (Oiganus Vartapied) Երևանից՝ ոչ այլ ոք է, եթե ոչ հայտնի և արդեն մի քանի անգամ մեր կողմից հիշատակված Ոսկան եպիսկոպոսը, որն այնչափ շատ էր աշխատում Ամստերդամում հայկական տպարան հիմնելու համար: Երևան քաղաքը, որտեղից Ոսկան եպիսկոպոսը հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ թե՛ Վենետիկում և թե՛ ալյուր, եկավ հասավ Ամստերդամ, ներկայումս դանվում է ՍՍՌՄ-ում, անմիջապես Հայաստանի սահմանի վրա և մոտիկ էջմիածնին: Պրոֆ. Մակլերն է, որ Ոսկան եպիսկոպոսի մասին շատ լավ տեղեկություններ է տալիս մեզ: «Revue des etudes Armeniennes» հանդեսում 1926-ին լույս տեսած պրոֆ. Մակլերի ուսումնասիրությունից մենք իմանում ենք նույնպես, որ 1660-ին արդեն տպագրվում էր հայերեն առաջին գիրքը գուցե հայագի Մարեցու կողմից: Մի տարի հետո, 1661-ին, լույս տեսավ Ամստերդամում երկու հայերեն գիրք ևս, որին հետևեց 1662-ին երրորդ գիրքը, բոլորն էլ հրատարակված Ոսկանի եղբոր Ավետիսի կողմից...

Ճշգրիտ որոնել էր զանվում հայկական առաջին տպարանը, մինչև այժմ ես չեմ կարողացել գտնել, ուրեմն և չի կարող խոսք լինել այդ մասին հավաստի կերպով: Հայկական է, ճշմարտությունից հեռու չի լինի, եթե մենք կարծիք հայտնենք, որ նա զանվելիս է եղել Նյումանկև և Բումսլուֆի անմիջական շրջակայքում, որտեղ նույնպես հայկական գաղութն է իր բնակությունը հաստատել:

Դր. Բերգն իր աշխատության մեջ ելնում է մեզ դեմահանդիման այս խնդրում: Նա պատմում է, թե 1655 թ. Հայաստանի պատրիարք Հակոբ 4-րդը, արվեստների և գիտությունների այդ հռանդուն երկրպագուն, տեղեկանալով, որ Վենետիկի և Զուլայի (Dschulf) տպարանների տպագրիչները անպետք են դարձել, Մատթեոս վան Ցար (Matthaseus van Dsar) անունով իր սարկավադին ուղարկեց Նիդերլանդիս, այդտեղ ավելի լավ տիպեր կտրելու համար: Դր. Բերգը կարծում է, որ այս Մատթեոս վան Ցարը հավանաբար կարելի է նույնացնել Մատթեոս Ավադի հետ, որի անձնավորության մասին իրավաբան De Roever-ը (Ռուվեր) հիշատակություն է անում տառ կտրողների էլեմվիրների, Քրիստոֆել վան Դեյկի կապակցությամբ...

5 Շարունակության մեջ հեղինակը խոսում է այն փոխհարաբերությունների մասին, որ գոյություն ունեին հոնդար աստվածաբան և տառ կտրող Նիկոլասս Կիսի և Ամստերդամում բնակվող հայ տպագրիչների միջև: Այնուհետև նա հիշատակում է հայերեն տառերի մի ավելի ուշ օրինակի մասին, որի վերաբերյալ նա հիշատակության է հանդիպել «Ամստերդամի հասարակական նոտար, հանդուցյալ Հ. Ա. վարմեյխենկի հիմնականում տպագրության արվեստի զարգացմանը վերաբերող հին և նոր գրքերի աճուրդի հանված կարևոր հավաքածուի ցուցակում» նշված մի գրքի մեջ: Այդ աճուրդը կազմակերպվել է Մեննո Հերցերբեգի միջազգային հնահավաքատան կողմից: Դուրիեզը գրում է. «Հիշատակված գրքի 438-րդ էջի վրա գրված է հետևյալը. «Մարտի 3. հայկական նմուշներ, Փարիզ (Յ. Յ. Մարսել), 1829. լաթակազմ, հայկական տպագրություն: Պարունակում է, ի միջի այլոց հայկական 6 տառատեսակներ՝ բոլորը գծագրված և կազմված հեղինակի կողմից: Բոլոր էջերը տպագիր են»: